

**Դրամաշնորհային աջակցություն «Մարդկային անվտանգության ծրագրերի» համար №S 2021
«Արմավիր քաղաքում թափոնների կառավարման կարողությունների բարձրացման և վերամշակման
խթանման» և
«Մեծ Պարնի գյուղի հանրակրթական դպրոցի սանիտարահիգիենիկ պայմանների բարելավման»
ծրագրերի ստորագրման արարողություն**

2021 թ. դեկտեմբերի 2-ին ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունում տեղի ունեցավ 82603 ԱՄՆ դոլար արժողությամբ «Արմավիր քաղաքում թափոնների կառավարման կարողությունների բարձրացման և վերամշակման խթանման» և 68059 ԱՄՆ դոլար արժողությամբ «Մեծ Պարնի գյուղի հանրակրթական դպրոցի սանիտարահիգիենիկ պայմանների բարելավման» ծրագրերի դրամաշնորհային պայմանագրերի ստորագրման արարողությունը՝ Մարդկային անվտանգության «Grassroots» ծրագրերի համար դրամաշնորհային աջակցության շրջանակում:

«Արմավիր քաղաքում թափոնների կառավարման կարողությունների բարձրացման և վերամշակման խթանման ծրագրի» դրամաշնորհային պայմանագիրը ստորագրվեց ՀՀ-ում Ճապոնիայի դեսպան պարոն Մասանորի Ֆուկուշիմայի և «Համայնքների կայուն զարգացման նորարարական լուծումներ» (ԱՅ ԷՍ ԷՍ ԴԻ) ՀԿ նախագահ պարոն Մխիթար Ավետիսյանի միջև:

«Մեծ Պարնի գյուղի հանրակրթական դպրոցի սանիտարահիգիենիկ պայմանների բարելավման ծրագրի» դրամաշնորհային պայմանագիրը ստորագրվեց պարոն Ֆուկուշիմայի և «Հայաստանում Ազգային ջրային համագործակցություն» ՀԿ նախագահ տիկին Արևիկ Հովսեփյանի միջև: Արարողությանը ներկա էին ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ պարոն Վաչե Տերտերյանը, Արմավիր համայնքի ղեկավարի պաշտոնակատար պարոն Խաչատուր Մկրտչյանը:

«Արմավիր քաղաքում թափոնների կառավարման կարողությունների բարձրացման և վերամշակման խթանման ծրագրի» նպատակն է Արմավիրի մարզում և շրջակա գյուղերում բարելավել կոշտ թափոնների կառավարման համակարգը՝ տեղադրելով աղբի տեսակավորման 220 աղբամաններ Արմավիր քաղաքում/գյուղերում և վերամշակելով հավաքված թափոնները: Հավաքված թափոնները կվերամշակվեն և կվերածվեն օգտակար գրենական պիտույքների, որոնց մի մասը անվճար կտրամադրվի առաջին դասարանցիներին: Արդյունքում ծրագիրը կունենա ավելի քան 35000 շահառու:

«Մեծ Պարնի գյուղի հանրակրթական դպրոցի սանիտարահիգիենիկ պայմանների բարելավման ծրագրի» նպատակն է բարձրացնել առողջապահության մակարդակը,

սանիտարահիգիենիկ կանոնների և վերամշակված ջրի օգտագործման ուսուցումը Մեծ Պարնիի դպրոցականների շրջանում: Ծրագիրը նախատեսում է Մեծ Պարնիի դպրոցում երեք գուգարանների ամբողջական վերականգնում և կեղտաջրերի մաքրման կայանի կառուցում՝ մաքրված կեղտաջրերն օգտագործելով այգիների ոռոգման համար: Արդյունքում ծրագիրը կունենա ավելի քան 240 շահառու:

Արարողության ընթացքում, ջերմորեն ողջունելով բոլոր հյուրերին, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ պարոն Վաչե Տերտերյանը իր երախտագիտությունը հայտնեց Ճապոնիայի կառավարությանը երկարամյա հարաբերությունների և համագործակցության համար: Նա նաև կարևորեց Հայաստանում իրականացվող ոռոգման և թափոնների կառավարմանն առնչվող ծրագրերը:

Իր հերթին, դեսպան Ֆուկուշիման նշեց, որ իր համար մեծ պատիվ է ներկա գտնվել ծրագրերի ստորագրման արարողությանը, և հույս հայտնեց, որ այս երկու ծրագրերը կմարմնավորեն Հայաստանի և Ճապոնիայի միջև բարեկամության խորացումը, ինչպես նաև հարաբերությունների հետագա ամրապնդումը:

Պարոն Ավետիսյանն, իր խոսքում երախտագիտություն հայտնեց Ճապոնիայի կառավարությանը և նշեց որ, լինելով Ճապոնիայի զարգացման համագործակցության ծրագրերի շրջանավարտ, ուրախ է, որ Ճապոնիայում ստացած գիտելիքները կարող է օգտագործել Արմավիրի մարզում և հետագայում այլ մարզերում թափոնների կառավարման ոլորտում:

Տիկին Հովսեփյանն իր խոսքում շնորհակալություն հայտնեց Ճապոնիայի կառավարությանն ու հույս հայտնեց, որ ծրագրի բարեհաջող իրագործման դեպքում այն հնարավորություն կընձեռի նմանատիպ ծրագրեր իրականացնելու նաև ՀՀ այլ մարզերում, որտեղ սանիտարահիգիենիկ պայմանների բարելավման կարիք կա:



Պարոն Տերտերյանի ելույթը



Դեսպան Ֆուկուշիմայի ելույթը



Դեսպան Ֆուկուշիման և պարոն Ավետիսյանը
դրամաշնորհային պայմանագիրը ստորագրելիս



Դեսպան Ֆուկուշիման և տիկին Հովսեփյանը
դրամաշնորհային պայմանագրերը միմյանց
փոխանցելիս